Պետրոս եպիսկոպոս նոցին սկսաւ զանպատեհս խօսիլ ընդ-դէմ հրովարտակին Գործակալաց և Հայոց իսկ, զորս Սա-խարեայն իբրեւ անօգուտ ոչ թարգմանեաց, այլ միայն թէ ուխտին անարգել բաժանորդ են, եւ թէ եդին անդ կանթեղս և պատկերս, և առին զմի մասն եկեղեցւոյն երկու խորանօք, ուր կատարեսցեն զօրէնս իւրեանց· այլ վասն պատարագելոյ յԱյրին չունիմք երբէք հաւանութիւն· իսկ եթէ դուք հրաման տայք՝ չկարեմք ասել ինչ։ Որոց ետուն պատասխանի Դատաւորք· դուք եւս կարէք կատարել զուխտս ձեր· զի հրովարտակ երկոցունցդ մի են և Տէրութիւնն ոչ է գրեալ մեզ հաճեցուցանել զձեզ եւ ոչ համարձակիմք վերստին դատել զձեզ· զի 'ի մեծի դատին հաւանութեամբ երկուց կողմանց ամենայն ինչ վճարեալ է, ոչ վճիռ և ոչ հրաման կարեմք տալ· այլ ջանամք ըստ պատշաճի պաշտօնի մերում գործադրել զհրաման Արքայի, և արդարութեամբ կատարել զամենայն ինչ։ Զի զոր ինչ եղեալ էք 'ի միտս ձեր, թողէք 'ի բաց· այլ ծանիք զոր այժմս ընթերցաք, իսկ եթէ ունիք զայլ ինչ բանս, ասացէք· զի Նուրի Էֆէնտի այլ ոչ եւս սպասէ աստ՝ զի ճանճրացեալ է, և Տէրութիւնն սպասէ պատասխանւոյ· մի այլ եւս յամառիք 'ի բանս ձեր· զի ըստ իրաւանց բաժանորդութեան չունիք ընդդիմանալ միմեանց, որովհետեւ քրիստոնեայ էք· գիտեմք ըստ վճռոյ մեծի Դենպետին՝ 'ի բաժանորդ տեղիս զոր ինչ առնէ մին, զնոյն ունի առնել եւ միւսն։ Հայք պնդէին 'ի վաղիւ սկիզբն առնել պատարագելոյ յԱյրին, զի դրով ազգ արասցեն Յոյնք տեսչին իւրեանց չընդդիմանալ։ Նոքա առանց պատասխանի տալոյ մեկնեցան անտի տրտմութեամբ· դարձ արարեալ Հայոց պատմեցին զամենայն Ծերունեաց, եւ առաքեցին 'ի Բեթղեհէմ զկիւմիւշխանեցի ծերունի Ստեփաննոս վարդապետն· և զկնի գիշերային ժամերգութեան և պատարագին Յունաց՝ զարդարեցին զխորանն որ 'ի վերայ Ծննդեան տեղւոյն Փրկչին մերոյ, եւ մատոյց Ստեփաննոս վարդապետ զառաջին փրկագործ պատարագն վասն փրկութեան հոգւոյ կենդանեաց և ննջեցելոց օրհնեալ ազգիս Հայոց (1813· 'ի 25 Նոյեմբերի)։

Սակայն Լատինք ոչ կամեցան մնալ զկնի Հայոց, զի